Արթիկ համայնքի <<Արթիկի թիվ 2 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի
Տնօրենի 2025 թվականի փետրվարի 04-ի N 12-Ա հրամանի

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի <<Արթիկի թիվ 2 մանկապարտեզ>>համայնքային ոչ առևտրային կազմակերպության մեթոդիստի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին

| N | Թափուր պաշտոնի անվանումը | Հավակնորդներին ներկայացվող պահանջները /չափորոշիչները/ | Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը | Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը /նյութերը/ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի <<Արթիկի թիվ 2 մանկապարտեզ>>համայնքային ոչ առևտրային կազմակերպության մեթոդիստ /0,75 դրույք/ | **1.Որակավորման պահանջները՝ հաստատության մեթոդիստի, տնօրենի ուսումնական գծով տեղակալի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա՝** բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտի աշխատանքի առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ:<br><br>**2.Ընդհանուր պահանջները. Նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստի, տնօրենի ուսումնական գծով տեղակալի պաշտոն զբաղեցնողը պետք է՝**<br><br>1) տիրապետի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկայով աշխատելու հմտություններին.<br>2) իմանա ստորև նշված նորմատիվ իրավական ակտերի այն դրույթները, որոնք վերաբերում են կրթության բնագավառին, կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները՝ ա. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասի», «Լեզվի մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Լիցենզավորման մասին», «Տեսչական մարմինների մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը, «Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը», Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի համապատասխան նորմատիվ իրավական ակտերը. բ. մանկավարժության, հոգեբանության, ֆիզիոլոգիայի, հիգիենայի հիմունքները, ուսումնամեթոդական փաստաթղթերի վարման սկզբունքներին: | Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, որը՝<br>1)Դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.<br>2)Դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից.<br>3)Տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության իրականացմանը.<br>4)Դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար: | 1) Դիմում (Ձև 1).<br>2) Անձը հաստատող փաստաթուղթ.<br>3) Կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).<br>4) Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).<br>5)Ինքնակենսագրություն (Ձև 4).<br>6) Մեկ լուսանկար՝ 3x4 չափի.<br>7) Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.<br>8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.<br>9) Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):<br><br>Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով: |

| Մրցույթն անցկացնելու վայրը,օրը,ժամը | Դիմումների և փաստաթղթերի ընդունում | Դիմումների և փաստաթղթերի ներկայացման ժամկետները |
| --- | --- | --- |
| Վայրը՝ ք. Արթիկ Անկախության 20/1 <<Արթիկի թիվ 2 մանկապարտեզ>>ՀՈԱԿ<br>Մարտի 5-ին, ժամը՝ 11.00 | Փաստաթղթերը ներկայացնելու ,լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել Արթիկ համայնքի <<Արթիկի թիվ 2 մանկապարտեզ>>համայնքային ոչ առևտրային կազմակերպություն,հեռ. 077907272:Հարցաշարերը տեղադրված են ԿԳՄՍՆ կայքում /Կրթության,գիտության,սպորտի նախարարի<<22>>հոկտեմբերի 2024 թվականի N 1981-Ա/2 հրաման/ : Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր , ժամը 09.00- 17.00, բացի շաբաթ և կիրակի օրերից: | 2025թվականի մարտի 4 |